Արձանագրություն 2

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-20/36» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.07.2020թ. ժամը 14:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Ադամյան - Գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետ (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Արամ Ասատրյան - Տեխնիկական բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Վահե Արամյան - Տեխնիկական բաժնի ենթակայանների և օդային գծերի շահագործման գծով ճարտարագետ (ԳՊ/ԳԱ)

Վահե Գարեգինյան - Ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ գնումների և մատակարարման բաժնի շուկայագետ Գոռ Թադևոսյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները

1.1«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-20/36» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

- JV SabaNiroo Company և Double Key Energy Company ընկերությունները՝ կոնսորցիումով՝ ՀՎՀՀ 00219737, էլ հասցե՝ sabaniroomanaging@gmail.com, Double K Energy@yahoo.com

1.2 Համակարգում 16.07.2020թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը՝ բացառությամբ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը /Հավելված 1/ և համատեղ գործունեության պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

4. Մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 ՀՀ Լոռու մարզի Պուշկինի լեռնանցքում գտնվող «Լոռի-1» հողմակայանի Vestas-47 մակնիշի թվով 4 հատ 660 կՎտ հողմաագրեգատների թերությունների վերացման, արտադրող գործարանի հրահանգների ծավալների համաձայն (կցվում է) մեկանգամյա տարեկան տեխսպասարկման (էլեկտրոնային, էլեկտրական և մեխանիկական մասեր) և շահագործման հանձնման աշխատանքներ	
	Նախահաշվային գինը՝ 70 000 000 ՀՀ դրամ	
JV SabaNiroo Company և Double Key Energy Company ընկերություններ՝ կոնսորցիումով	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ
	72735465,11 /132167 EUR/	87282338 /158600EUR/

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել.

Ծանուցել «JV SabaNiroo Company և Double Key Energy Company ընկերություններին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և բացակայող փաստաթղթերը ուղարկել davit.gasparyan@hven.am էլեկտրոնային հասցեին:

5.2 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի հուլիսի 20-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Ադամյան

Հանձնաժողովի անդամներ՝

Արամ Ասատրյան

Վահե Արամյան

Վահե Գարեգինյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան